բաթ կը հրաւիրէր իր մտերիմ բարեկամքը, յորս կը յիշուին Տիմա, Աբու, Կոզիէ, Սէն Սաէն, Դէն, Վակնէր, Լիզ։ Այլ թէպէտ բարեկամ էր Վակնէրի, սակայն իր երաժշտական կուռքն էր անուանին Ռոսինի, և կը սքանչանար բոլոր իտալական երգայարդարներուն վրայ։

Ամենաքիչ կը խօսէր, և իր բարեկամքն իրեն Կիւստավ Լռակեացն մականունը կու տային։ Միջահասակ էր և արտաքնապէս չունէր այն նորաձև հանգամանքները, յորոց սովոր է ռամիկն արուեստագէտները ճանչնալ, թերևս զի ռամիկ արուեստագիտաց հաճոյ է այսպիսի արտաքին երևոյթներով նորաձև երևիլ։

Ինչպէս յաշխատութեան այսպէս նաև ծխելուն մէջ անպարտասելի էր. թերևս միայն սիկարք էին իրեն շռայլութեան ծախքն։ Որովհետև ընդհանրապէս իբրև ագահ մեղադրուած էր, այլ երբ առիթն կու գար նաև ծախք ընելու մէջ մեծ ըլլալու, հազարաւոր ֆրանգաց չէր խնայեր. ուզելով ըսել անոնցմէ միայն մէկը, երբ Լեգէոնին պատուոյ ասպետ եղաւ, իրեն բարեկամաց սեղան մը և հանդէս մը տուաւ, որ երկու օր և երեք գիշեր տևեց, իրեն Ուղի Պայրի ոստանոցին մէջ, որուն պատերը իրեն նկարած պատկերներով ծածկեր էր։

---

# ԻՇԽԱՆՔ ՕՌԼԷԱՆՈՒ ԱԶԳԱՏՈՀՄԻՆ

Ի Փրանկիոյ թագաւորաց տոհմից սերուածքը յաքսոր դրկելու կամ զինուորութենէն հանելու (և այս վերջինս կատարուեցաւ) օրինաց առաջարկութիւնն 'ի լոյս հանեց վաղ ընդ փոյթ զիշխանս՝ որ այն օրինաց տակ կ'ինկնէին, յորս առաջինքն՝ Օռլէանու ազգատոհմին անդամք։ Ասոնց վրայ շատ խօսուեցաւ, և աշխոյժ վիճաբանութեանց, մաքառմանց մէջ միանգամայն ժողովրդականք եղան նաև արտաքոյ Փրանկիոյ։ Կը հրատարակենք իրենց քանի մը կենսագրական ծրագիրները։

Նախ առաջին, յերևան կու գայ ԿՈՄՍՆ ԲԱՐԻԶՈՒ, ԼՈՒԴՈՎԻԿ ՓԻԼԻՊՊՈՍ ԱԼԲԵՐԴ ՕՌԼԷԱՆՈՒ, ծնեալ 'ի Բարիզ 'ի 24 օգոստոսի 1838ին, յարքայազարմ իշխանէն Փերդինանդոսէ։ Վարդագոյն գուշակութիւնք իր օրորանը ծաղկազարդեցին, և սակայն սակաւ յիշխանաց իրեն նման կրեցին 'ի ձախող բաղդէ։ Տասնամեայ էր երբ 1848ին խռովութեան մրրկէն այս Լուդովիկ Փիլիպպոս թագաւորի եղբօրորդին հալածուեցաւ այն քաղաքէն որուն անունը կը կրէր։ Հելէնէ մօրն հետ, որ Մէքլէնպուրկ Շուէրինի Փեդերիկոս Լուդովիկ իշխանին դուստրն էր արտաքոյ հայրենեաց ապաւէն փնտռեց։ — Թափառեցաւ 'ի Գերմանիոյ յԱնգղիա, յԱնգղիոյ յԱրևելս, և յետոյ 'ի Սպանիա, և ապա յԱմերիկա։ Չարաբախտութեանց խիստ դպրոցն արդարապէս հասունացուց իր ոգին. իր դիմաց վրայ կը տեսնուէր անոյշ ծանրութիւն մը, սանձահարեալ զօրութիւն մը, խորին մտախոհութիւն մը։ Դեռ չափահաս չէր երբ մայրն մեռաւ, և այն ատեն իրեն յանձանձիչ դրուեցաւ Նըմուրի կոմսն։ Երբ ապստամբութեան պատերազմն ծագեցաւ 'ի Միացեալ Նահանգս, դուքս Տը Շարդրը եղբօրն հետ նաւարկեց յամերիկեան ծովափունս. և երկուքն ալ իբրև ինքնակամ զինուորք դաշնաւորական գնդից մէջ մտան, Մագ-Գլէլանի զօրավարին սպառազինաց մտերիմք։

Դառնալով յԵւրոպա 1862ին, տուաւ ինքզինքը գրագիտական աշխատութեանց և պատմական և տնտեսական ուսմանց, յորոց հատուածք երևցան 'ի Revue des Deux Mondes օրագրի։ Սակայն քան զինքն լաւագոյն կը ճանչնան ընկերական խնդիրը և գործաւորաց խնդիրը. ինքն սորվեր է հօն, այն աշխատութեան մեծամեծ վառարանաց մէջ, այն գործաւորաց մեծամեծ հայրենեաց մէջ որք են Ամերիկա և Անգղիա։ Յիշենք իր երկու գլխաւոր գործերը. Գործաւորական ընկերակցութիւնք յԱնգղիա, և Վիճակ գործաւորաց յԱնգղիա։ Քանի մը տարիէ 'ի վեր կը զբաղի իր Պատմութիւն քաղաքական մարտին յԱմերիկա գործոյն, որու վեցերորդ հատորն ելնելու վրայ է։ — Ի 1864ին Կոմսն Բարիզու ամուսնացաւ Մոնբանսիէի դքսին դստեր՝ Մարիամ Իզաբէլլա իշխանուհւոյն հետ. այս ամուսնութենէս ծնան երկու դստերք և երկու ուստերք։

Այլ երևելագոյնն, այն որ Օռլէաններուն մէջ առաջին տեղին կը բռնէ, անտարակոյս ՕՄԱԼԻ ԴՈՒՔՍՆ է, որ իր վաթսնամեան հասակին հանդերձ, թեթևանդամ, հուժկու, յանկուցիչ խօսող, անյաղթելի որսորդ է։ Իր զինուորական ծառայութիւնքն, իր աշխոյժ գործօնէութիւնքն՝ զոր իր երկրին գրագիտական և արուեստագիտական շարժման մէջ ցըցուց, իր գաղղիական ճեմարանին անդամ ըլլալու պատիւն, վերջապէս իր հարստութիւնն և իր մեծաշուք Շանդիլյի դղեակն՝ ուր հաւաքեց դիւթական թանգարանի մը մէջ ազգատոհմին յիշատակքը, յառաջ եկեալք 'ի Գոնտէէ, զինքը անզուգական դիրքի մը մէջ կը դնեն։ Ու դեռ քան զնա ընտիր ասպետ է. մատենագիր է, արուեստագէտ է։

digitised by A.R.A.R.@

Եօթնևտասնամեայ մտաւ բանակին մէջ. 1840ին իբրև զրուցատար հեծեալ անցաւ յԱլճէրի։ Յետոյ ութեմն հրամանատար եղաւ հօն Մէտէյաւ ենթազօրաբաժնին։ Արքայն 1847ին իրեն յանձնեց Ափրիկէի ստացութեան ընդհանուր վարչութիւնը. այլ վեց ամսէն ետքը խռովութիւնն ծագեցաւ, և հարկ եղաւ որ ինքն ալ, ինչպէս կ'ըսեն բանաստեղծք, խածնէ աքսորանաց փոշին։ Ապաստանեցաւ յԱնգլիա, ապա այլ և այլ տեղ կենալէն ետքը հաստատուեցաւ 'ի Դուիքէնհամ։ Երբ 1871ին մտաւ 'ի Փրանկիա, Ուազի բաժնին ներկայացուցիչ անուանեցաւ։ Իբրև զօրավար զօրաբաժնի վերստին դառնալով 'ի բանակն, 1872ին անուանեցաւ հրամանատար 7.° գնդի բանակին, պատիւ զոր պահեց մինչև 1879, յորում կարգեցաւ բանակի գնդաց ընդհանուր տեսչութեան վրայ։ — Ի 1844ին ամուսնացաւ Սալեռնոյի Լէոպոլտ իշխանին դստեր հետ և երկու որդի ունեցաւ, գլխաւոնն Գոնտէի և դդուքսն Կիզայի, երկուքն ալ մեռած։ — Զուավք և հետիոտն որսորդք, — Ալժիրիա, տեղեկութիւն 'ի վերայ եօթներորդ պատերազմին կատարուած 'ի Գաղղիա, Ձիաւորական ուսումնարանք 'ի Փրանկիա, Ալժերեան խնդիրն, ահաւասիկ այս մատենագիր դքսին երկասիրութիւնքն, որ իր աշխարհին զինուորական և պատմական գրականութեան մէջ գեղեցիկ տեղ մը կը բռնէ։ Այլ իր գլխաւոր գործն է՝ Պատմութիւն իշխանաց Գոնտէի, յերկու ըստուար հատորս, հմուտ, ճոխ, արուեստագիտի քանի մը գեղեցիկ նախանձելի նկարագրութեամբք։

ՆԷՄՈՒՐԻ ԴՔՍԻՆ ( ծնեալ 'ի 1814 ) կենաց մէջ դրուագ մը կը փայլի որ կը ցուցընէ թէ ինչ ոգի ունէր ինքզինքը զոհելու։ Պելճիոյ մէջ կըռուելէն վերջը, անցաւ յԱլճէրի, որու տիրելն, ինչպէս որ ծանօթ է, հազարաւոր արկածներով նշանաւոր եղաւ, յորոց վերջինն չէ ասիական ժանտախտն՝ որ զինուորաց մէջ նախճիր կը գործէր։ Նպաստից, հիւանդապահաց պէտք կար. և իշխանն առանց անձնացուցութեան, պարզութեամբ, քրիստոնէաբար, անզուգական անձնուրացութեամբ մը իր օգնութիւնը ընձեռեց դարմանոցաց (ambulance)։ Գոստանդինայի առումէն ետքը դարձաւ 'ի Բարիզ և ամուսնացաւ իշխանուհւոյ մը հետ՝ որու շնորհքն և քաղցրութիւնն իրեն սփոփանք եղան աքսորանաց աւուրց մէջ յԱնգլիա, ուր նաև վայելեց Թագուհւոյն առանձին խնամքը։ Իրեն ուրիշ ասպետական գործ մը աւելի աղէկ պիտի ճանչցընէր իր բարքը։ — Փետրուարի 24 էր։ Թիւյլրեայց արքունեաց մէջ քանի մը հաւատարիմ գունդք մնացեր էին, և ինքն այն ատեն իրեն յայտնի վտանգաւոր հրամանատարութիւնը ձեռքն առաւ արքայական տան ազդեցութիւնը կրցածին չափ պահելու համար։ Երբ ապահով եղաւ որ արքայական ընտանեաց անդամք ամենը մեկներ էին, ինքն այնպիսի կէտի մէջ գտնուեցաւ որ ալ չէր կրնար մեկնիլ։ Շատ աշխատեցաւ անցագիր մը գտնելու համար, և հարկ եղաւ որ քանի մ'օր ծածկուած մնայ։

Լուդովիկի միապետութեան ժամանակ Օռլէաններէն ուրիշ մը, ԺՈՒՌԱՆՎԻԼԻ ԻՇԽԱՆՆ, թագաւորին որդւոց մէջ ամենէն ժողովրդականն եղաւ։ Իր նկարագիրն է, յանդգնութիւն, յանձնապաստանութիւն, քանքարք՝ որովք մանաւորապէս 'ի Փրանկիա կը յառաջադիմէ մէկն։ Նախամեծար ընտրեց զծով և անոր պատահարքը. կապեց իր անունը Լուդովիկ Փիլիպպեայ Թագաւորութեան ծովային շահատակութեանց հետ, փռանկական նաւաստւոյ սիրելի անձնաւորութիւն մ'ըլլալով։ Երբ 1838ին Մեքսիգոյի պատերազմն ծագեցաւ, Գրէոլա կորբատին հրամանատարութիւնը առաւ և նշանաւոր եղաւ։ Ինքն եղաւ որ 1840ին 'ի Ս. Հեղինէէ ինքնակալին աճիւնն Պէլ Բուլ նաւուն մէջ փոխադրեց։

Ինքն ալ գրեց և կը գրէ։ Պատմեց իր պատերազմունքը։ Քաջառողջ է իր 63ամեայ հասակին մէջ։

Հազիւ քսանևմիամեայ էր երբ վերջին որդին Լուդովիկ Փիլիպպեայ՝ ԴՈՒՔՍՆ ՄՈՆԲԱՆՍԻԷ յԱփրիկէ կը գտնուէր՝ այն պատերազմին մէջ։ — Յետոյ ութեմն կը տեսնենք զինքը ճանապարհորդ յԱրևելս։ Կին առնելով Սպանիոյ Իզապէլլա Բ թագուհւոյն քոյրը, — Մարիամ Լուիզա Փերտինանտա, — ապաւինեցաւ աքսորանաց տարեաց մէջ 'ի Սիվիլիա։ Հօն Իզապէլլա թագուհին յանկարծակի անուանեց զինքը սպանիական բանակին ընդհանուր սպարապետ, նմանցընելով աշխարհին բարձրագոյն պատուակալաց։ Երբ խռովութիւնք շարժեցին զթերակղզին, ինքն գէշ ժամանակներ անցուց։ Թագուհւոյն ամուսնոյն եղբայր մը, Ինֆանտ տոն Հէնրիկոս, տեսնելով 'ի նմա իշխանութեան հետամտութիւն, նախատեց զինքը։ Անկէ մենամարտութիւն մ'առաջ եկաւ, յորում դուքսն զհակառակորդն սպաննեց։

Լիւսոն և Մինտանաօ—Քաղուածոյք ճանապարհորդութեան օրագրի միոյ 'ի վերջին ծայր Արևելից, ԱԼԱՆՍՈՆԻ ԴՔՍԻՆ պատմութեան մը տիտղոսն է, երկրորդ որդի Նէմուրի դքսին, ծնեալ 'ի 1844։ Այս է պատմութիւնն զինուորական ուղևորութեան արարեալ 'ի Փիլիպպեան կղզիս, ուր քանի մ'ապստամբեալ ազգք կոչեր էին յօգնութիւն զսպանիական գունդս։ Նորօրինակ պատերազմ մ'եղաւ, կղզեցւոց կողմանէ նետից հարուածներով, և իշխանին կողմանէ մեծազօր հրացաններով։

Զինուորի ճշմարիտ նախատիպ օրինակ մ'է Բարիզու Կոմսին եղբայրն ՌՈԲԵՐԴ ՕՌԼԷԱՆՈՒ, դուքս Շարդրի, ծնեալ 'ի 1840. իրեն պէտք է

digitised by A.R.A.R.@

անդադար շարժումն, բանակի կեանքն, աշխատութիւն, վտանգ։ Ինքն զինուորական արուեստն 'ի Գուրին աւարտեցաւ։ Առաջին անգամ զէնք առաւ խառնակութեանց բանակին մէջ, Նիցցահեծելազօրի գնդէն ըլլալով, ուր նշանաւոր հանդիսացաւ։ Յետոյ ուրեմն ընթացաւ Ամերիկայի պատերազմին, 'ի նախապաշտպանորդս, ամեն փոքր պարագայից իր կեանքը վտանգի մէջ դնելով։ Թողլով զԱմերիկա, աւելի ևս մարզելու պէտքը իմացաւ, և անոր համար ճանապարհորդեց աշխարհներ։ Ինքն ալ կը զուարճանայ գրիչը շարժելով, ինչպէս սուրը. գրեց զինուորական խնդրոց վրայ։

Վերջինն է Բանդիէվրի Դուքսն, ՊԵՏՐՈՍ ՓԻԼԻՊՊՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐԻԱ ՕՌԼԷԱՆՈՒ, ծնեալ 'ի 1843, որդի Ժուանվիլ իշխանի։ Իր հօրը պէս նաւաստի, դրսէն երկչոտ կ'երևի, այլ ընդհակառակն քաջասիրտ է։ Իր նաւական փորձը Միացեալ Նահանգաց մէջ կատարեց, և պորտուգալական ծառայութեան մէջ երկու տարի զինուորութիւն ըրաւ հարաւային ծովուց մէջ. յետոյ ճանապարհորդեց 'ի Չինաստան, յԱւստրալիա, 'ի Ճափոն, երկայն պանդխտութիւն մը։

Կարելի չէ ուրանալ որ Օռլէանեանց ազգատոհմին մէջ ժառանգեալ չըլլայ հուրն հին ասպետական ոգւոյն և դիպուածոց սիրոյ, ձեռներէցութեանց, զինուց, ցուցեալ նաև 'ի փրանկական բանակին, ուստի կուսակցութիւն մը զինքը արտաքսեց։ Թերևս ազնուական ազգատոհմին առակն չէ լմնցած։

---

# ՀՌԻՔԱՐՏՈՍ ՎԱԿՆԷՐ

Երբ Հռիքարտոս Վակնէր Գուլիէլմ Թելի հեղինակին (Ռոսսինի) երաժշտախումբը «առաջին կիթառ» մը կը կոչէր, և իտալական քաղցրաբարբառ նուագները կը ծաղրածէր, անշուշտ չէր կարծեր մեռնիլ այս նուագաց հայրենեաց մէջ, յորոց յառողջարար խնամոց կը խնդրէր առողջութիւն և հանգիստ։

Մասնաւոր մը անցեալ տարւոյ առաջին ամսոց մէջ կը տեսնէ զՎակնէր 'ի Բալերմօ. վտտտակոտեկ մարդ մը կ'երևէր, բոլորովին ձանձրացած։ Չէր ուզեր ընդունել նաև հոյանուն խմբերաժշտապետները, որոնք կ'աղաչէին ներկայանալու իրեն։ Կ'ելնէր երբեմն Արմաւենեաց պանդոկէն (Albergo delle palme), ուր իջեւաներ էր, մերձաւոր ծովափունքը երթալու՝ այն կապուտակագոյն խորքը, այն անհուն երկինքը, այն գունոց և լուսոյ հանդէսը նկատելու համար։ Ռամիկ մարդ մը կը համարէիր զինքը. սակայն երբ կը բանար գլուխը, կ'երևէր բովանդակ իր հոյակապ ճակատն, լայն, ճառագայթարձակ, աթոռ մտածութեանց, նշանակ հանճարոյ։

Եւ թէ արդեօք ինքն հանճարոյ մարդ մ'էր՝ ոչ ոք այսօր կրնայ մխտել զայն։ Ո՛ր այն երաժիշտ յաշխարհի՝ որ իրեն պէս պատերազմի և անարգութեան նիւթ եղաւ։ Բայց իրեն զօրութեան գաղտնիքն այնքան կռուոց կատաղութեան մէջ մնաց։ Միայն բարձրագոյն և նորագիւտ հանճարոյ մարդկան տրուած է այնքան շարժելու այն համաստարած ոգը՝ յորում կ'ապրին։

Հռիքարտոս Վակնէր ծնաւ 'ի Լիպսիա 'ի 22 մայիսի 1813ին՝ Պրիւլ փողոցին հին տան մը մէջ, 'ի թիւն 88։ Իր հայրն, դպրապետ առենի քաղաքին, իրեն ծննդենէն վեց ամիս յետոյ մեռաւ, և մայրն նոյնհետոյն անցաւ յերկրորդ ամուսնութիւն։

Զինքը նկարիչ մը կ'ուզէին ընել. այլ նա պատկերահանութեան բնաւին հոգ և փոյթ չէր տաներ։ Ընդհակառակն համ կ'առնէր 'ի բանաստեղծութենէ, և անյագաբար կը կարդար բազմաթիւ հատորներ։ Ինչպէս Պերլիոզ, ինչպէս Շուման, ծծեց Հռիքարտոս Վակնէր ալ բանաստեղծական գրականութիւնը։

Կ'ըսեն թէ Պէդհովէնի միաբարբառ երգ (symphonie) մը լսելով, կը զարթնու 'ի նմա երաժշտական հանճարոյ կայծն, և իրեն առաջին միաբարբառ երգն՝ գրեալ 'ի 1832ի՝ ներշնչեալ ըլլայ իրեն հայրենակից վեհագոյն միաբարբառ երգոց նուագածուէն։

Կարոլոս Կոցցի իտալացին, արհամարհեալ և երեսէ թողուած յիտալիա, գտաւ իրեն բուն հայրենիքը գերմանական մեծ հայրենեաց մէջ. Իր առասպելներն թերևս երևակայական տարրեր պարունակելուն համար, դեռ ևս հաճոյ կ'անցնին Գերմանացւոց։ Շիլլէր օրինակեց իրմէ զԹուրանտոտ, և երիտասարդն Հռիքարտոս Վակնէր մտածեց առնուլ անկէ զՎհուկս, որ իր առաջին թատերգութիւնն (opéra) է։ Այս թատերգութեանս չափազանց պէդհովեան և վեպէրեան գոյներն այնչափ հաճոյ չէին երիտասարդ հեղինակին, որ մինչուան այն ատենէն սկսեալ՝ յատուկ ճամբայ մը կ'ուզէր փնտռելու, և ինքն զՎհուկս դատապարտեց մոռացութեան։

Բալէրմոյի Նորընծայուհին, յօրինեալ 'ի 1835ին և հանդիսացուցեալ երկրորդ տարին, ուրիշ փորձ մ'էր իր կրկնակ հանճարոյն — հանճար բանաստեղծի և երաժշտի, — այլ սակաւք յաջող համարեցան զայն։

digitised by A.R.A.R.@